

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ  
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Սովորողների ճանաչողական հետաքրքրության  
բարձրացումը գիտափորձերի և «Շրջված դասարան » մեթոդի կիրառմամբ

Հետազոտող ուսուցիչ՝ Ռուզաննա Թադևոսյան

Երևանի Գր.Բաղյանի անվան հ.141 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ .....	5
ա) Ուսումնական մոտիվացիա.....	5
բ) Ճանաչողական հետաքրքրության զարգացում .....	7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ՝ «ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ» .....	12
«ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ» ՄԵԹՈԴԻ ԻՄ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.....	15
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	22
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	24

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Քանի որ ուղեղը ի վիճակի չէ ուշադրություն  
դարձնել ամեն ինչի, ոչ հետաքրքիր, ձանձրալի  
կամ էմոցիոնալ մտայլ դասերը պարզապես չի հիշում:*

### ԼԱՐՐԻ ԷԼԼԻՍՈՆ

Ժամանակակից կրթական համակարգում տեղի ունեցող խոշոր փոփոխությունների, նոր ուսումնական փորձի և ծրագրերի ներդրման վերջնական նպատակն է բարենպաստ պայմանների ստեղծումը անձի զարգացման համար՝ հաշվի առնելով նրա հետաքրքրությունները և ընդունակությունները:

Ի՞նչ անել, որ երեխան սիրով գնա դպրոց, հեշտությամբ սովորի: Ո՞ր չափանիշը թույլ կտա գնահատել երեխայի պատրաստվածությունը դպրոցական կյանքին: Բազում ծնողներ կարծում են, որ այդ չափանիշը նախնական գիտելիքն է՝ գրել, կարդալ իմանալ, հաշվարկներ անել: Որ այս ամենը թույլ կտա հեշտ կհարմարվել ուսումնառությանը:

Սակայն սա բավարար չէ հարմարվելու համար: Գիտելիքով զինված բազմաթիվ երեխաներ հենց առաջին ամիսներին կարող են անտարբերություն ցուցաբերել, խախտել կանոններ, բացասական խոսել դպրոցի մասին և, ի վերջո, հրաժարվել դպրոց գնալ: Դպրոցական նյութը երբեմն անհետաքրքիր է երեխային, անհրաժեշտ է մոտիվ՝ որոշակի «անհետաքրքիր», բարդ, հոգնեցնող նյութերը սովորել կարողանալու համար:

Ժամանակակից մանկավարժության հիմնական խնդիրներից մեկը երեխաների սովորելու, գիտելիքներ ստանալու ցանկության եւ հետաքրքրության պակասն է: Որոշ երեխաների մոտ ուսման գործընթացի դրդապատճառներն անհետանում են, այլևս չհայտնվելու հիմքով, մյուսները՝ տարբեր պատճառներով:

Մոտիվացիոն պատրաստվածության մասին խոսելիս նկատի ունենք ճանաչողական հետաքրքրությունը. երեխային պետք է հետաքրքրի նոր բան իմանալը:

Ճանաչողական հետաքրքրությունը երեխայի մեջ կա ի ծնե. շատ կարևոր է զարգացնել այն՝ պատասխանելով «ինչուիկ» հարցերին, խաղալով զարգացնող խաղեր, խրախուսելով ցուցաբերած հետաքրքրությունը, սկսած գործն ավարտի հասցնելը՝ դրանով բարձրացնելով երեխայի ինքնագնահատականը, խթանելով դժվարություն հաղթահարելու ձգտումը, խթանելով նոր գիտելիքն ինքնուրույն գտնելու, կիրառելու, «շոշափելու» ձգտումը: Ուսուցչի կողմից այս ամենի ապահովումը հնարավորություն է տալիս զարգացնելու սովորողի ճանաչողական հետաքրքրությունը և նպաստելու ուսումնական մոտիվացիայի ձևավորմանը:

Դասի յուրաքանչյուր թեման մատուցելուց առաջ՝ նախապատրաստվելով դասին, ուսուցիչը պետք է պատասխանի հետևյալ հարցերին. ի՞նչ սովորեցնել, որ հետաքրքիր լինի սովորողին, ինչպե՞ս սովորեցնել, որ նրա մեջ ցանկություն առաջանա շարունակելու այդ կրթությունը, ինչու՞ սովորեցնել, որտե՞ղ կիրառել այդ ամենը, կյանքի ո՞ր հատվածում այն կօգնի սովորողին հաղթահարելու արգելքները...

Դպրոցականների մոտ գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման, շարունակական կրթության և ինքնակրթության անհրաժեշտության և կարողության ձևավորումը ժամանակակից դպրոցի կարևոր ռազմավարական խնդիրն է:

Եթե սովորողը դասի ժամանակ տեսնում և հասկանում է, որ ինքն է իր գիտելիքը ձեռք բերում, ինքն է հայտնաբերում, ինքն է սովորեցնում, ինքն է փոխանցում այն, նրա մոտ սովորելու մեծ հետաքրքրություն է առաջանում: Քանի որ այդ գործընթացն ընթանում է իր համար հաճելի, համապատասխան պայմաններով և գործիքներով պայմանավորված միջավայրում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

### ա) Ուսումնական մոտիվացիա

Կրթել մարդուն ժամանակակից կրթական համակարգում, նշանակում է դաստիարակել նրան մարդկային գործունեության հիմնական ձևերում բացահայտելու և ստեղծելու կարողություն և կարիք: Անհրաժեշտ է ուսուցումը կառուցել այնպես, որ աշակերտը հասկանա և ընդունի ուսուցչի առաջադրած նպատակները, որպեսզի նա ակտիվ մասնակից լինի դրանց իրականացմանն ուղղված աշխատանքներին:

Մասնագիտական գրականության մեջ մոտիվացիան դիտարկվում է որպես բարդ, բազմաստիճան մի համակարգ, որը կարգավորում է անձի կենսագործունեությունը, նրա վարքը և գործելակերպը:

Մոտիվացիան գործողությունների շարժառիթ է, հոգեֆիզիկական գործընթաց, որը սահմանում է մարդու վարքի ուղղությունը:

Սովորողների համար սովորելու մոտիվացիան շատ կարևոր գործոն է ինչպես ներկայի, այնպես էլ՝ ապագայի հաջողության համար: Շատ հաճախ ինչ-որ բան անելու համար մեզ պակասում է մի կաթիլ մոտիվացիա: Արդյունավետ դասավանդման հիմքում ընկած է սովորողների մոտիվացիան:

Սովորողների ուսումնական մոտիվացիայի խնդիրը հետաքրքրել է գիտնականներին վաղուց: Թեման ծավալուն է, իհիստ այժմեական, արդիական է և հետազոտական շարունակական աշխատանք է պահանջում: Թեմայի արդիականությունը կապված է նոր կրթական համակարգին հարմարվելու անհրաժեշտության հետ: Սովորելու մոտիվացիան դինամիկ երևույթ է, այն փոխվում է մարդու կյանքի ընթացքում և յուրաքանչյուր տարիքում ունի իր առանձնահատկությունները:

Մոտիվացիան ցանկացած գործունեության հիմքն է, այդ թվում՝ կրթական: Վ.Ա.Սուխոմլինսկին ասել է. «Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով ավելի լավ գիտի, թե ինչ է պետք իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»: Հենց կրթական մոտիվացիան է ճանաչողական հետաքրքրության ձևավորման, մտածողության զարգացման, անհատի

մասնագիտական հաջող գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման երաշխավորը:

Մոտիվացիան ներքին վիճակ է, ցանկություն, որն ակտիվացնում է վարքագիծը և ուղղորդում դեպի նպատակը: Մոտիվացիան մարդու վրա ազդելու գործընթաց է՝ որոշակի դրդապատճառների ակտիվացման միջոցով նրան որոշակի գործողությունների դրդելու համար: Այսինքն, մոտիվացիան խթան է, որը մեզ ստիպում է գործել: Կրթական մոտիվացիայի ձևավորումը կարելի է համարել կրթության կենտրոնական խնդիրներց մեկը:

Ա. Մասլոուն դիտարկում էր մոտիվացիան, որպես բարդ, բազմաստիճան, անհամասեռ համակարգ, որը ներառում է անձի պահանջները, մոտիվները, հետաքրքրությունները, ձգտումները, կարգադրումները, էմոցիաները, նորմերը և արժեքները, որոնք պայմանավորված են անձի այս կամ այն պահանջմունքով» (Маслоу А. Мотивация и личность. – СПб., 2006, էջ 126 ):

Ըստ Լ.Ի.Բոժովիչի, «մոտիվացիան ուղղվում է արտաքին աշխարհի այս կամ այն առարկաներին և գաղափարներին, պատկերացումնրին և ապրումներին, որոնք մարմնավորում են անձի պահանջները և լավագույնս արտահայտում են դրանք» (Божович, Л. И., Проблема развития мотивационной сферы ребенка, М.: Педагогика, 1972, էջ՝ 44):

Ուսումնական մոտիվացիայի և ակտիվության երեք հիմնական աղբյուրներ կան՝

- 1) ներքին,
- 2) արտաքին,
- 3) անձնային:

Մոտիվացիայի անձնային աղբյուրներն են պահանջմունքները, հետաքրքրությունները, կարգադրումները, կարծրատիպերը, որոնք պայմանավորում են ինքնակատարելագործման, ինքնահաստատման և ինքնակայացման ձգտումը, որը դրսևորվում է ուսումնական գործունեության մեջ:

Մոտիվացիայի արտաքին աղբյուրներն են աշակերտի կյանքի պայմանները, սպասումները և սոցիալական հնարավորությունները:

Մոտիվացիայի ներքին աղբյուրներն են աշակերտների ճանաչողական և սոցիալական պահանջմունքները:

Եթե ուսումնական գործունեության ընթացքում աշակերտի մոտ նկատվում է ձգտում դեպի ուսուցանվող առարկայի բովանդակությունը, ուսումնական գործընթացն ընդհանուր առմամբ, ապա դա խոսում է այն մասին, որ տվյալ երեխան առաջնորդվում է ճանաչողական մոտիվներով (Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. Формирование мотивации учения. – М.: Просвещение, 1990, էջ 46) :

### **բ) Ճանաչողական հետաքրքրության զարգացում**

Ճանաչողական հետաքրքրությունը աշակերտի ուսումնական մոտիվացիայի կարևորագույն աղբյուրն է: Այն շատ մեծ ազդեցություն է թողնում առհասարակ ճանաչողական գործընթացի վրա: Այդ իսկ պատճառով ուսման ընթացքում դասավանդվող առարկայի հանդեպ հետաքրքրության խթանումը աշակերտների մոտ հանդիսանում է մանկավարժի կարևորագույն խնդիրներից մեկը: Եվ մանկավարժը իր ձեռքի տակ ունի համապատասխան մեթոդական և ուսումնական հնարքների մի ամբողջական բանակ՝ այդ խնդիրն իրագործելու համար: Տվյալ գործընթացի ճիշտ մանկավարժական կազմակերպման և նպատակաուղղված դաստիարակչական գործունեության ծավալման ընթացքում այս հատկանիշը կարող է դառնալ աշակերտի անձի կայուն մասը՝ հետագայում ուժեղ կառուցողական ազդեցություն թողնելով նրա ուսումնական և ցանկացած այլ գործունեության արդյունավետության վրա:

Ուսուցիչների առաջ միշտ եղել է ճանաչողական հետաքրքրությունների զարգացման խնդիրը: Նույնիսկ Սոկրատեսն իր ուսանողներին սովորեցնում էր տրամաբանորեն մտածելու, ճշմարտությունը փնտրելու, մտածելու կարողությունը: Ժան Ժակ Ռուսոն աշակերտի համար ստեղծել է հատուկ իրավիճակներ՝ առաջացնելով նրանց մոտ ճանաչողական լարվածություն, որպեսզի նրանք ցանկանան նոր գիտելիքներ գտնել: Պեստալոցին և մյուս ուսուցիչներն այնպես էին դասավանդում, որ աշակերտը ոչ միայն պատրաստի գիտելիք էր ստանում, այլև ինքնուրույն էր ձեռք բերում այն:

Տարբեր գիտնականներ տարբեր իմաստներ են ներդնում ճանաչողական հետաքրքրություն հասկացության մեջ: Ամենատարածված սահմանումների թվում են՝

- Ս.Լ.Ռուբինշտեյն. «Մա անհատի հատուկ ընտրողական միտումն է ճանաչողության գործընթացին, որի բնույթն արտահայտվում է կոնկրետ ցանկացած ոլորտում»:
- Ֆ.Ն. Գանդրլին. «Մա մարդու ցանկությունն է՝ ուշադրություն դարձնել կոնկրետ ինչ-որ բանի, ճանաչել կոնկրետ առարկաներ և գործողություններ»:

Հոգեկան արդյունավետության, ակտիվ ճանաչողական գործունեության զարգացումը երիտասարդ սերնդի կրթման կարևորագույն խնդիրներից մեկն է: Պատճառը շատ պարզ է՝ այդ հատկությունները կպահանջվեն անձի կյանքի ընթացքում, և եթե մանկության ընթացքում նոր գիտելիքների եւ հմտությունների ցանկություն չի առաջանում, ապա հետևանքները շատ ցավալի կլինեն: Ճանաչողական գործունեությունը հաջողություն է բոլոր ապագա գործերում:

Կոգնիտիվ հետաքրքրության ակտիվացման խնդիրը բավականին արդիական է ժամանակակից հասարակության մեջ: Որպեսզի կրթությունը նպաստի սովորողի որպես անձ ձևավորմանը, անհրաժեշտ է մարդու մեջ «արթնացնել» նրա ռացիոնալ գործունեության սկզբնական, առանցքային օղակը՝ ճանաչողական կարիքը, որն էլ հանդիսանում է նրա ճանաչողական գործունեության աղբյուրը և գտնվում է մարդու ճանաչողական հետաքրքրության ակտիվացման հիմքում: Ավելին՝ Կ.Դ. Ուշինսկին գրել է, որ առաջին հերթին անհրաժեշտ է մարդու մեջ զարգացնել նոր գիտելիքներ «ձեռք բերելու» ցանկությունն ու կարողությունը ինքնուրույն՝ առանց ուսուցչի օգնության. սովորողին տալ գործիք, որը կօգնի նրան օգտակար գիտելիքներ ստանալ ոչ միայն գրքերից, այլև իրեն շրջապատող առարկաներից՝ կյանքի իրադարձություններից, սեփական հոգու պատմությունից: Ունենալով այնպիսի մտավոր ուժ, որն ընդունակ է ցանկացած տեղից օգտակար տեղեկատվություն քաղել, մարդն իր ամբողջ կյանքը կուսումնասիրի, ինչը, իհարկե, ցանկացած դպրոցական կրթության հիմնական խնդիրներից է:

Գիտական, մեթոդական, մանկավարժական գրականության վերլուծությունը թույլ տվեց որոշել ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման ընդհանուր



ռագմավարությունը, որոնք դինամիկ, շարժական համակարգ են, որոնք գոյություն ունեն ակտիվացման տարբեր մակարդակներում և ունեն հետաքրքրության ակտիվացում յուրաքանչյուր փուլի տարբեր աստիճաններում: Գիտնականների ուսումնասիրություններում՝ Ն.Գ. Մորոզովան, Գ.Ի. Շչուկինան և ուրիշներ, սահմանվում են ճանաչողական հետաքրքրության ակտիվացման հետևյալ փուլերը.

✓ **Հետաքրքրասիրությունը տարրական փուլ՝** պայմանավորված արտաքին, անսպասելի և անսովոր հանգամանքներով, որոնք գրավում են երեխայի ուշադրությունը: Մինևույն ժամանակ, զվարճանքը կարող է ծառայել որպես հետաքրքրության բացահայտման սկզբնական փուլ, առարկայի նկատմամբ հետաքրքրություն ներգրավելու մի տեսակ միջոց, որը նպաստում է հետաքրքրության անցմանը պարզ կողմնորոշման փուլից դեպի ավելի կայուն ճանաչողական վերաբերմունքի փուլ:

Հետաքրքրասիրությունը անհատականության արժեքավոր վիճակ է, որը բնութագրվում է հենց անձի՝ տեսածից այն կողմ անցնելու ցանկությամբ: Հետաքրքրության ակտիվացման այս փուլում բավականին ուժեղ են արտահայտվում զարմանքի հույզերը, մարդուն ճանաչելու բերկրանքը:

Ճանաչողական հետաքրքրությանը բնորոշ է ճանաչողական ակտիվությունը, արժեքային մոտիվացիան, որում հիմնական տեղը զբաղեցնում են ճանաչողական մոտիվները: Դրանք նպաստում են անհատի ներթափանցմանը ուսումնասիրվող երևույթների էական կապերի, ճանաչողության օրենքների մեջ:

✓ **Տեսական հետաքրքրություն՝** սովորած տեսական հարցերն իրենց հերթին օգտագործվում են որպես գիտելիքների գործիքներ: Այս փուլը մարդուն բնութագրում է որպես կատարող, ենթակա, ստեղծագործող մարդ:

Նրա ակտիվ կողմնորոշման գործընթացին ուղեկցող մարդու ամենակարեւոր վիճակներն են զարմանքի, տարակուսանքի, զարմանքի վիճակները: Նորույթը արտաքին միջավայրի խթանն է, որը գրգռում է այդ վիճակները, աշակերտին բերում հնարավորինս դրական հույզեր: Սա բազմաթիվ նոր փաստեր, տեղեկություններ, տեսություններ են, որոնց գոյության մասին սովորողների մեծ մասը նախկինում չէր կասկածում:

Ճանաչողական հետաքրքրությունը գործում է որպես կրթության արդյունավետության և բարձր որակի հասնելու պայմաններից մեկը: Ուսուցման գործընթացում ճանաչողական հետաքրքրության առկայությունը ապահովում է ուսման նկատմամբ գիտակցված վերաբերմունքի աճը, ճանաչողական գործընթացների զարգացումը, դրանք կառավարելու և գիտակցաբար կարգավորելու կարողությունը: Ուստի դպրոցի առջև խնդիր է դրված աշակերտին դարձնել ճանաչողական գործունեության ակտիվ մասնակից: Այս խնդրի լուծումը մեծապես կախված է սովորողների նկատմամբ անհատական մոտեցման իրականացումից:

Դասապրոցեսում որևէ առարկայի նկատմամբ աշակերտների հետաքրքրության ձևավորումը, կայացումը և շարունակականությունը, հմուտ մանկավարժական գործողությունների միջոցով անընդհատ զարգանալով և ամրապնդվելով, դառնում է ուսման հանդեպ դրական վերաբերմունքի հիմքը, ստեղծում է ուժեղ մոտիվացիոն դաշտ:

Միաժամանակ հետաքրքրությունը կրում է որոնողական բնույթ: Դա նշանակում է, որ հետաքրքրության ազդեցության ներքո աշակերտը ձգտում է պատասխաններ փնտրել մշտապես առաջ եկող հարցերին, ընդ որում այդ գործընթացը կրում է բավականին ակտիվ բնույթ և ուղեկցվում է մշտական ստեղծագործական աշխատանքով աշակերտի կողմից: Շատ կարևոր հատկանիշ է, որ հետաքրքրությամբ առաջնորդվող աշակերտը ցանկացած ուսումնական գործունեություն ծավալում է բարձր էմոցիոնալ ֆոնի վրա, ինչն էլ ավելի է նպաստում ուսումնական գործընթացի արդյունավետությանը: Կարևոր է այն հանգամանքը, որ ճանաչողական հետաքրքրությունը ոչ միայն բերում է ուսումնական գործընթացի արդյունավետությանը, այլև խթանում է երեխայի հոգեկան գործընթացների՝ հիշողության, մտածողության, երևակայության, ստեղծագործականության, բարեհաջող ընթացքը:

Աշակերտների մոտ գործնական աշխատանքով հետաքրքրության խթանումը իրականացվում է մի շարք կարևոր հանգամանքների հիման:

Դրանցից առաջնայինը և հիմնականը հանդիսանում է դասի ժամանակ ուսուցչի կողմից համապատասխան իրավիճակների ստեղծումը, որոնց պարագայում

աշակերտներին առաջարկվում են առաջադրանքներ, որոնք կապված են գործնական խնդիրների լուծման պատասխանների որոնման, մտահանգումներ կատարելու հետ:

Այսինքն, աշակերտների գործնական աշխատանքով հետաքրքրության խթանման գործում առաջին կարևոր նախապայմանն է համապատասխան իրավիճակի ստեղծումը, երբ աշակերտը պետք է դրսևորի իր մտածողության ունակություններն, ինքնուրույն աշխատանք կատարի՝ առաջադրված հարցերին պատասխանելու համար: Երկրորդ նախապայմանն է մանկավարժի կերպարը և նրա դասավանդման ոճը, ինչպես նաև նրա կողմից ընտրված դասավանդման մեթոդները և կիրառվող գործիքները:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԸ՝ «ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ»

«Դասարանի շրջում» մեթոդի էությունն այն է, որ նոր նյութի հետ սովորողների առաջին ծանոթությունը կայանում է դասարանից դուրս՝ սովորաբար կա՛մ կարդալով, կա՛մ տեսադաս դիտելով, իսկ հետո հատկացված դասաժամի ընթացքում ավելի դժվար աշխատանքն է կատարվում՝ նյութի ամրապնդումը խնդիրների լուծմամբ, քննարկումով:

Սովորողները իմացական ավելի ցածր մակարդակի աշխատանքն (գիտելիքի ձեռքբերումը և ընկալումը) անում են դասարանից դուրս, իսկ ավելի բարձր մակարդակի իմացական աշխատանքի վրա կենտրոնանալը (կիրառումը, վերլուծումը, համադրումը, արժևորումը) կատարվում է դասարանում, որտեղ նրանք ունեն դասընկերների և ուսուցչի աջակցությունը:

Բարբարա Վոլվուդը և Վիրջինիա Ջոնսոն Անդերսենը այս մոտեցումը զարգացրել են իրենց «Արդյունավետ գնահատում» (1998) գրքում: Նրանք մի մոդել են առաջարկում, որով սովորողները սկզբնական գիտելիքն ստանում են նախքան դասը, իսկ դասի ընթացքում կենտրոնանում են համադրման, վերլուծության, խնդիրների լուծման և այլնի վրա: Որպեսզի համոզված լինեն, որ սովորողներն իրոք անում են անհրաժեշտ նախադասարանային աշխատանքը տանը, Վոլվուդը և Անդերսենը նոր նյութի հետ առաջարկում են նաև այդ նյութի վրա հիմնված որոշ տնային առաջադրանք (գրավոր շարադրանք, ոչ բարդ խնդիրներ):

Այս մոդելը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում է դասարանի շրջումը: Առավել հաճախ այդ նյութերն իրենցից ներկայացնում են փոքր տեսանյութեր, որոնք ուսուցիչներն իրենք են պատրաստում, իսկ աշակերտները առկա դասընթացից առաջ դրանք ուսումնասիրում են ինքնուրույն:

Ուսուցումն իրականացվում է դասի ընթացքում ուսուցչի անհատական աջակցությամբ: Դա հնարավորություն է տալիս ժամանակ խնայել ակտիվ մանկավարժական աշխատանքներ իրականացնելու, աշակերտների ըմբռնումը ստուգելու և դասընթացի հայեցակարգերը խորացնելու համար: «Շրջված դասարան» մոդելի կիրառման դեպքում ուսուցիչը գիտելիքների փոխանցողի դերից անցնում է

գիտելիքների միջնորդի դերի, ով փնտրում, ստեղծում և սցենարավորում է թվային ռեսուրսներ, ուղեկցողի և խորհրդատուի դերի:

2007 թ-ից այս մոտեցումն օգտագործվում է Միացյալ Նահանգների մանկապարտեզներում, միջնակարգ դպրոցներում, քոլեջներում և համալսարաններում: 2011 թ.-ից ի վեր, նախ Կանադայում, այնուհետև Եվրոպայում և այլ ֆրանսախոս երկրներում կիրառում են այս մոդելը :

Կոլորադոյի քոլեջի քիմիայի երկու ուսուցիչներ՝ Ջոնաթան Բերգմանը և Սարոն Մամսը համարվում են «Շրջված դասարան» մեթոդի առաջամարտիկները: Լինելով գյուղական դպրոցի ուսուցիչներ՝ նրանք աշակերտների բացակայության շատ մեծ խնդիր ունեին: Մի օր նրանք անսպասելիորեն բացահայտեցին, որ կարող են PowerPoint-ի սլայդները ձայնագրել իրենց ձայներով, դարձնել տեսանյութեր և ներբեռնել YouTube-ում, որն այդ ժամանակ նոր էր զարգանում: Այսպիսով, 2007 թ.-ին, նրանք սկսեցին ձայնագրել իրենց դասախոսությունները և տեղադրել առցանց այն աշակերտների համար, ովքեր չէին կարողանում ներկա գտնվել իրենց դասին: Առցանց դասախոսությունները շատ արագ ներգրավեցին այլ աշակերտների, ովքեր սկսեցին նայել այդ տեսանյութերը, քանի որ դա նրանց թույլ էր տալիս ավելի լավ հասկանալ ուսուցիչների կողմից քննարկվող թեմաները, ովքեր արդեն սկսել էին օգտագործել այդ ձայնագրությունները իրենց դասաժամի ընթացքում և ձայնագրում էին իրենց ուսումնական տեսանյութերը: Արդյունքում առաջանում էր «Շրջված դասարան» մեթոդը... Արդյո՞ք դա իսկապես ժամանակակից պրակտիկա էր, և Բերգմանը և Մամսը առաջինն էին, որ օգտագործեցին այս մոտեցումը դասի ընթացքում: Այն պրակտիկան, որ ուսուցիչը պահանջում է իր աշակերտներից կարդալ տեքստը դասից առաջ, պատրաստել նյութ մի թեմայի շուրջ դասաժամին ներկայացնելու համար, որոնել փաստաթղթեր գրադարանում կամ փաստաթղթավորման կենտրոնում բոլորովին նոր չէ, և շատ ուսուցիչներ կիրառում են ամեն օր: Նորություն կարող են համարվել տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները, որոնք փոփոխություն են ապահովում և շարունակ զարգանում են: Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները ավելի ու ավելի մատչելի են դառնում իրենց հեշտ օգտագործման, ցածր գնի կան անվճար լինելու շնորհիվ: Այդ տեխնոլոգիական գործիքները թույլ են տալիս ուսուցիչներին և աշակերտներին

արտահայտել իրենց կարծիքները առցանց, կազմակերպել քննարկումներ և հարցումներ և ձեռք բերել գիտելիքներ:

Ուսուցչի և աշակերտների փոխազդեցության ժամանակահատվածը կարող է օգտագործվել հմտություններ զարգացնող աշխատանքներ կատարելու նպատակով: Պարզվում է, որ այս մոտեցումը լավ միջոց է աշակերտների և իրենց ուսուցիչների հարաբերությունները ամրապնդելու համար: Հաշվի առնելով այն փաստը, որ դասի տեսական մասն արդեն փոխանցվել է դասը սկսելուց առաջ, ուսուցիչը կարող է ավելի շատ ժամանակ տրամադրել աշակերտների կողքին լինելու համար և նրանց օգնելու կատարել առաջադրանքներ այն պահին, երբ դրա կարիքն առավել շատ են զգում:

«Շրջված դասարան» մեթոդը նաև լավ միջոց է ուսուցումը դասաժամից առաջ և հետո տարբերակելու և անհատականացնելու համար: Աշակերտն այսպիսով հետևում է դասին՝ իր համար ցանկալի տեմպով: Նա կարող է դիտել տեսանյութը այնքան անգամ, որքան ցանկանում է: Աշակերտները կարող են դանդաղեցնել կամ արագացնել իրենց ուսուցման տեմպը՝ ըստ իրենց սեփական կարիքների: Ուսուցիչն ավելի շատ ժամանակ կարող է տրամադրել անհատապես կամ աշակերտների փոքր խմբերի հետ աշխատելու համար՝ նրանց առաջարկելով իրենց կարիքներին համապատասխան առաջադրանքներ:

«Շրջված դասարան»-ում աշխատանքը հիմնված է աշակերտի վրա. վերջինս դառնում է իր ուսուցման դերակատարը և մասնակցում է դասընթացի համաստեղծմանը: Այս պրակտիկայի շնորհիվ ավելի շատ ժամանակ է հատկացվում հմտությունները զարգացնելուն և խորացնելուն՝ կատարելով ավելի բարձր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ, որոնք ավանդական դասաժամերի դեպքում կատարվում են դասերից հետո:

## «ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ» ՄԵԹՈԴԻ ԻՄ ԿԻՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասաժամի համար կիրառել եմ «Շրջված դասարան» մեթոդը: Բայց մի քիչ ձևափոխած, քանի որ սովորողները 2-րդ դասարանցի էին: Ժամանակի ընթացքում տեսադասերն արդեն ձայնագրված էի ուղարկում իրենց:

Այս առարկայի դեպքում հասկացել եմ, որ սովորողներն ունեն գիտելիքներ, բայց չէին ձևավորվել կարողություններն, ու ցածր էր հետաքրքրությունը և՛ առարկայի, և՛ շրջապատող երևույթների նկատմամբ:

Նկատել էի, որ երբ սովորողներին հետ գնում էինք որևէ մշակութային միջոցառման, նրանք տրանսպորտի մեջ, երթևեկության ամբողջ ընթացքում, խաղում էին հեռախոսով: Այս հանգամանքն ինձ համար ազդակ հանդիսացավ, որ ես այդ գործիքը՝ հեռախոսը, դարձնեի երեխաների համար ուսուցման և հետաքրքրության մեծացման աղբյուր:

Այսօրվա կյանքն անհնար է պատկերացնել առանց համակարգչի ու համացանցի: Այս տեխնոլոգիաները փոխել են բոլորիս՝ այդ թվում երեխաների կյանքը: Սակայն հարկ է արձանագրել, որ այդ նոր իրողությունն ունի երկու տեսակի ներգործում, մասնավորապես, կրտսեր դպրոցականների վրա: Մի կողմից համակարգչի և սմարթֆոնների կանոնավոր օգտագործումը խաղերի, սոցիալական ցանցերի, մուլտֆիլմերի դիտման համար կարող է առաջացնել համակարգչային կախվածություն, իսկ մյուս կողմից համացանցը բացում են բազմաթիվ հնարավորություններ՝ հարյուրավոր հավելվածներ, երաժշտություն, մուլտֆիլմեր, խաղեր, ուսումնական ծրագրեր երեխաների աշխարհաճանաչողությունը զարգացնելու համար: Անչափ դժվար է կրտսեր դպրոցականներին պաշտպանել համակարգչի բացասական ներգործությունից, սակայն դա օրապահանջ է: Այս պարագայում կարևոր է, որ սովորողն ինքը գա այն համոզմունքին, որ համացանցը կարելի է օգտագործել խելամտորեն և շահավետ, իսկ մեծահասակի դերն այստեղ կայանում է նրանում, որ վերջինս պետք է հետևողական լինի, որ անգամ շահավետ օգտակար օգտագործումը չվերածվի կախվածության:

Հեռախոսը, որպես ուսումնական գործիք, կիրառել էի նախորդ դասարաններում: Սովորողները գրանցվել էին կրթական կայքում: Ամեն օր, օրվա

որոշակի ժամի, բոլորը մուտք էին գործում համակարգ, կատարում որոշակի թեմային վերաբերող առաջադրանքները: Ես էլ միաժամանակ հետևում էի նրանց աշխատանքներին, ընթացքում ցուցումներ տալիս: Հետո այդ աշխատանքը կատարում էինք դասարանում՝ որոշակի թեմայի սահմաններում: Աշխատում էին 7 րոպեի սահմաններում: Ժամանակը չէին չարաշահում ո՛չ տանը, ո՛չ էլ , առավել ևս, դասարանում:

Օգտագործել են հեռախոսի ինտերնետ կապը, դասարանում, նաև նոր նյութի, նոր եզրույթի որոնման նպատակով: Մուտք են գործել հայկական գրքերի շտեմարան, հայկական էլեկտրոնային գրադարան:

Դասերի ընթացքում կիրառում եմ դասավանդման փոխներգործուն մեթոդը: Փոխներգործուն մեթոդի հիմքում ընկած է մասնակիցներից յուրաքանչյուրի փորձի միջոցով ուղղակի ազդեցությունը միմյանց վրա, քանի որ փոխներգործուն մեթոդներից շատերը իրականացվում են հենց մասնակցի փորձի շնորհիվ, ընդ որում ոչ միայն կրթական: Նոր գիտելիքը և կարողությունը ձևավորվում են հենց այսպիսի փորձի հիման վրա:

Իսկ ըստ կառուցվածքի և կիրառման օգտագործեցի գիտափորձեր: Փորձերը աշակերտների կողմից տարբեր սարքավորումների հետ աշխատելու կարողություններ, գործնական և հետազոտական կարողություններ պահանջող նոր նյութի ուսումնասիրմանը միտված ինքնուրույն աշխատանք է: Երեխաներին պետք է գիտություն սովորեցնել վաղ տարիքից: Փորձերը լավագույնս հարմար են դրա համար՝ տեսողական, հետաքրքիր և երեխաների համար անսպասելի արդյունքների տանող: Հաճախ ծնողներին թվում է, թե երեխաներին գիտության հետ կապված ինչ-որ բան սովորեցնելը դժվարագույն աշխատանք է: Բհարկե, նրանք կարող եք այս դժվարին խնդիրը թողնել ինտերնետին : Բայց վաղ թե ուշ ստիպված կլինեն բարդ թեմաները բաժանել դասերի, որոնք երեխան կարող է սովորել: Ուրեմն ավելի լավ է այս գործը թողել ուսուցիչներին:

*Ինչո՞ւ սկսեցի փորձերը (անվանեցի՞նք գիտափորձեր, որ հետաքրքիր լինե՞ր երեխաներին) և ինչպե՞ս:*

Նախ, հասկանալի է, որ այս ամենի արդյունքում պետք է մեծանար սովորողի ճանաչողական հետաքրքրությունը:



«Ես և շրջակա աշխարհը» 2-րդ դասարանի դասագրքի 1-ին մասի դաս 14-ի շրջանակներում, հասկանալու համար բույսերի կառուցվածքը, դասարանում կազմակերպեցինք գործնական, հետազոտական աշխատանք: Մովորողները հողի մեջ ցանեցին լոբու հատիկներ: Յուրաքանչյուր սովորող իր դիտարկումները գրանցում էր իր անվանական թերթիկի վրա: Աշխատանքը տևեց 2,5 ամիս: Թափանցիկ ամանների միջից հրաշալի երևում էին բույսի ստորգետնյա մասը, վերգետնյան էլ արդեն ակնառու դիտարկում էին:

Այս աշխատանքը շատ մոտիվացրեց նրանց և բարձրացրեց նրանց հետաքրքրությունը շրջապատի նկատմամբ: Հաջորդիվ ցանեցին ածիկ և տուն տարան:





Քանի որ առարկայի ծրագրի սահմանում անցնում էինք ջրի մասին, այդ թեման ավելի լավ հասկանալու, ջրի հատկություններն իմանալու, հատկապես՝ կիրառելու, ջրի արժեքը գիտակցելու, խնայողաբար օգտագործելու նպատակով սկսեցի փորձերի շարք՝ նվիրված ջրի հատկություններին:

Ջուրը զարմանալի նյութ է, և կկարողանաք դա ստուգել և միննույն ժամանակ զարմացնել երեխաներին այս փորձի ժամանակ: Ջուրը ամենասովորական և հասարակ նյութն է մեր մոլորակի վրա: Միննույն ժամանակ ջուրն իր մեջ թաքցնում է բազմաթիվ գաղտնիքներ: Մինչև հիմա մասնագետները շարունակում են հետազոտել այն և գտնել նորանոր հետաքրքիր տվյալներ:

Ես, դասարանում, տվյալ դասի վերջում, նախապես պատրաստած պարագաներով ցուցադրում էի փորձը: Ընթացքում, կամաց-կամաց, երեխաներին ներգրավում էի փորձի մեջ: Փորձն այնպես էի սկսում, որ սովորողների մոտ առաջանար հետաքրքրություն տվյալ գործողությունների նկատմամբ: Դասը այդ մասը պետք է լինի զգացմունքային, հետաքրքրություն առաջացնի ուսման նկատմամբ դաստիարակի գիտելիքների պահանջարկ: Դասի դաստիարակչական նպատակները շատ կոնկրետ էի ձևակերպել՝ կիրառելով հետևյալ արտահայտությունները՝ հետաքրքրություն արթնացնել և առաջացնել,

աշակերտներին մղել ակտիվության, իր վերաբերմունքն արտահայտել, արմատավորել, ամրապնդել հմտությունները:



Դիտել և քննարկելուց հետո աշակերտներն իրենց մոտ նշումներ էին անում, հարցեր էին տալիս: Դասարանում կատարած փորձը , մի քանի օրվա ընթացքում սովորողները կատարում էին տանը, ավելացնում որևէ փոքր մաս, կապված փորձի հետ, եթե հնարավոր է: Տեսանկարահանում էին կատարած փորձը և ինտերնետի օգնությամբ ուղարկում էին ինձ:(հավելված)



Հաջորդ դասին ներկայացնում էին, թե ինչ դժվարությունների հանդիպեցին, ինչը հաջողվեց և ինչպես, ինչը չհաջողվեց և ինչու:

Ինձ շատ զարմացրեց այն հանգամանքը, որ այս ամենի արդյուքնում սովորողների մոտ շատ արագ սկսեց ակտիվանալ բանավոր խոսքը: Իրենց ուղարկած վիդեոների մեջ նրանք ոչ թե անձայն կատարում էին այն, այլ նաև սկզբից մինչև վերջ պատմում և մեկնաբանում էին:

Ժամանակի ընթացքում հանձնարարում էի որևէ սովորողի պատրաստվել և ինքնուրույն ներկայացնել հաջորդ փորձը: Այս քայլն ավելի մեծ աշխույժություն առաջացրեց նրանց մեջ: Սկսեցին գրականությունից, ինտերնետից փնտրել անհրաժեշտ լրատվություն, զբաղվել ինքնուրույն գործունեությամբ, փոխանակել միմյանց հետ ինֆորմացիան:

Հաջորդ քայլի ժամանակ փորձին ներգրավեցի սովորողների ծնողներին: Նրանք իրենց բալիկի հետ էին կատարում փորձը դասարանում:



Ինձ հատկապես ուրախացնում էի նրանց, ինձ ուղարկած, տնային վիդեոները: Որտեղ նկատելի էին նաև տան մեծ ու փոքր անդամները, որոնք նույնպես ցանկանում էին մասնակցել փորձերի կատարմանը:



## ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գիտափորձերի նկարահանումներն ինձ փոխանցում էին սովորողները: Այստեղ ևս ես իրենց ստիպեցի համացանցն օգտագործել՝ ըստ կիրառելիության և օգտակարության: Սովորողներից ոմանք նույնիսկ սովորեցին հոլովակ պատրաստել և մի քանի փորձ մեկ հոլովակի տեսքով ուղարկել:

Շատ հետաքրքիր էր նրանց խոսքը: Ես հատուկ չէի ասել, որ նկարահանման ժամանակ իրենց ներկայացնեին: Բայց զարմանալի էր, որ նրանք շատ լուրջ էին մոտեցել անգամ այդ հարցին: Ես հավաքում և համակարգում էի նրանց ուղարկած տեսաձայնագրությունները, դասարանում հնչեցրած հարցերն ու եզրահանգումները, վերջնարդյունքները: Համեմատում էի իմ առաջադրած նպատակների հետ:

Չեմ կարող ասել, որ ինձ հաջողվել է բոլոր սովորողներից ստանալ հետադարձ կապ: 22 հոգանոց դասարանում 19 սովորող էր կատարում տանը: Տարբեր հանգամանքներից էլնելով նրանցից 3-ը այդպես էլ չկատարեցին: Մա ևս իմ կողմից արձանագրվեց: Ես այդ սովորողներին ինձ հետ միասին էի մասնակից դարձնում փորձերին, որ նրանք էլ կարողանային մասնակցել: Միասին էինք մշակում փորձի թեման, նպատակները, գործիքները, ընթացքը, դասարանում նկարահանումը: Որ դուրս չմնային այդ հաճելի գործընթացից:

Ուսումնական տարին ավարտեցին շատ մեծ կարողությունների պաշարով: Գիտակցեցին ջրի դերը մարդկության կյանքում, նրա օգտակարությունը, արժեքը: Որ ջուրը կյանքի սկզբնաղբյուրն է, առանց որի հնարավոր չէ ապրել: Կյանքը ծագել է ջրից: Ջուր կա ամեն մի կենդանի էակի մեջ: Ջուրը, ինչպես և լույսը, կենդանի ինֆորմացիա է կրում և փոխանցում: Ջրին հնարավոր է ծրագրել, ջուրը լսում և հիշում է շրջակայքում կատարված ամեն բան:

Սկսվել է նոր ուսումնական տարին: Այս փորձերը շարունակվելու են՝ հաշվի առնելով առարկայի ծրագրային բովանդակությունը և սովորողների տարիքային հոգեբանամանկավարժական առանձնահատկություններն ու կարիքները: Ինչպես նաև նրանց ճանաչողական հետաքրքրությունների մեծացող շրջանակը:

Հետաքրքրության խթանումը մանկավարժական կարևոր խնդիրներից է, որը գտնվում է ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Այս գործընթացը անհրաժեշտ է իրականացնել նորարարական մեթոդների կիրառմամբ, քանի որ ավանդական

մեթոդները, որպես կանոն, չեն արդարացնում իրենց այն աշակերտների պարագայում, ում մոտ զգացվում է ուշադրության և հետաքրքրվածության պակաս տվյալ առարկայի նկատմամբ՝ ելնելով դրա առանձնահատկություններից:

Տվյալ հետազոտական աշխատանքի ընթացքում դիտարկվել է այս խնդրի լուծման նոր մոտեցում, որը կայանում է նորարարական մեթոդի կիրառման մեջ: Վերոնշյալ մեթոդի կիրառությունը զգալի դրական արդյունքներ է տվել հետազոտական դասերի ընթացքում՝ բավականին մեծ հետաքրքրություն առաջացնելով իմ աշակերտների մոտ:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Գ.Կովալյով, «Հոգեբանություն», Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 1970թ.
2. Ա.Վ. Պետրովսկի, «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», «Լույս» հրատարակչություն, Երևան 1997թ.
3. Ա. Հովսեփյան, Ա. Կարապետյան և ուրիշներ, «Ես և շրջակա աշխարհը»-2, «Մանմար» հրատարակչություն, 2010թ.
4. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ծրագիր և չափորոշիչ-  
<https://escs.am/files/files/2020-07-16/78d42f8e0e54315f27def6183904452f.pdf>
5. «Հանրակրթության Պետական չափորոշիչ»-  
<https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/6588f3a3ca1ed9b5dd824197a59c1222.pdf>
6. Հ. Այվազյան, «Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում», Երևան 2014
7. «Շրջված դասարան» - Վանդերբիլթի (ԱՄՆ Թենեսի նահանգ) համալսարանի կայք՝  
<https://cft.vanderbilt.edu/guides-sub-pages/flipping-the-classroom/>
7. Божович, Л. И., «Проблема развития мотивационной сферы ребенка», М.: Педагогика, 1972г.
8. Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. «Формирование мотивации учения». – М.: Просвещение, 1990г.
9. Маслоу А. «Мотивация и личность»г.. – СПб.: 2006 г.



Հավելված

<https://drive.google.com/drive/folders/1KOrwCIqRgxsTxKa7pIzovY0AsA8FcUf?usp=sharing>